ԲԱԶՄԱՎԷՊ

Զ. ՏԱՐԻ. ԹԻՒ 9. 1848 ՄԱՅԻՍԻ 1.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԽՐԱՏՔ ՊԻՏԱՆԻՔ

Ո՛Վ ԻՇՏՍ բարեկամին անձին քում համարեա, և 'ի քաջաշնորհութեան քում օգնեա նմա։

Փոյթ, սիրելի, յուրախութիւնս կոչեցեալ պարտ է գնալ. իսկ 'ի վիշտս անկոչ։

Ոչք եղբարս ունին և սիրելիս խընդրեն, նման են ոչք զիւրեանց անդաստանն թողեալ և զօտարին գործեն։

Ականջ և սիրելի, ոչ զիւրն այլ զօգտակարն պարտ է խնդրել։

Ի կենցաղումս փափաքելի պարտ է լինել քան թէ ահեղ։

Յիշեսցէն հեզ լեր, և ընդ իշխանութեամբ երկայնամիտ։

Նթէ ընդ իշխանութեամբ լինել ոչ ուսար, իշխան լինել մի համարձակիր։

Որպէս զմեղուն տեսանեմք 'ի վերայ ամենայն ծաղկանց նստել, այլ զկիտանին առնու, նոյնպէս ամենայն իրաց պարտ է հմտանալ, սակայն զօգտակարն առնուլ։

Պարտ է զբանից գանձարանն պահել քան զընչից։

Բրմատ խրատուն դառն, այլ պըտուղն նորա քաղցր։

Խրատն բարեշնորհից զարդ է, իսկ վատաշնորհիցն ապաւէն։

Իմաստից առաւել հոգ տարցիս քան թէ ընչից. քանզի նոքաւ ստանին ինչք, իսկ ընչիւք ոչ ստանի իմաստութիւն։

Ոչ հիւանդաց բաղմական և ոչ անմտաց բախտութիւն օգուտ է։

Բախտն նման է աղեղնաւորի որ 'ի նպատակն երբեմն 'ի մօտ և երբեմն 'ի հեռի ընկենու։

Ոչ արտաքոյ անմեղին կայուցանէ զանձն իւր՝ որ զիւր մեղն հեղութեամբ խոստովանի։

Բխտք մարդկան ոչ գովելով և ոչ

թագուցանելով ողջանան, այլ պատմելով բժշկացն. նոյնպէս և ոչ մեղքն։

Օ Էնոն առ այնոսիկ որ առաւել փափկանային և պարծէին զի շատ ուներին գանձս, ասէ. Պա ուրեմն ոչ մեղադրելի են խոհակերքն յաղի առնել զխորտիկն. զի ունին շատ աղ։

Պիոգինէս 'ի յոյժ մատռուակէն հեղոյր զգինին. և 'ի մեղադրելն ասէ. Թէ ըմպեմ՝ զինքն և զիս կորուսանէ. լաւ է սմա միայն կորնչել։

Յնպէս լեր առ ծնողս քո, որպէս կամիս լինել առ քեզ զորդիս քո։

Օրդիս քո փութա խրատեալս Թողուլ քան Թէ հարուստս։

Փայտ 'ի հրոյ մաշի, և տուն 'ի շոգմոգայ։

Ինդալ պարտ է ընդ տրտմեցուցանելն քան ընդ շոգմոգելն. քանզի նոքա զգաստացուցանեն, և սոքա Թոյլս և ծոյլս գործեն։

Ի վերայ շոգմոգայ որպէս 'ի վերայ գերեզմանաց անուն մարդոյ միայն գըրեալ է։

Ոչ է պարտ ընտրել որ 'ի մեծամեծ քաղաքաց իցեն, այլ որ մեծամեծք 'ի քաղաքաց ելանիցեն։

Որոյ չէ լուել՝ նա և ոչ խօսել։

Ի լուութենէն պարտ է առաւել երկնչել քան 'ի ձայնէն։

Տունկք յարմատոյ աՀեն, և փառք 'ի հեզութենէ։

Իշխանութիւն մեծ է ոչ ընդունել պատիւ, այլ արժանի պատուոյ զանձն կացուցանել։

Ի կենաց աշխարհիս որպէս 'ի սեղանոյ պարտ է յառնել. ոչ քաղցեալ և ոչ յագեալ, ոչ ծարաւ և ոչ արբեալ։

Որ 'ի ժամ մահու կտակս գրեն, նըման են որք 'ի ժամանակի նաւակոծութեան զհարկաւոր նիւթս որոնեն։

Ինդ իշխանի պարտ է կալ որպէս ընդ կրակի. մի ամենևին մօտ զի մի այրեսցէ, և մի կարի հեռի զի մի ցրտասցի։

ՈՍԿԻՓՈՐԻԿ

Յաջորդաց Բարիւրը մոռանալ։

Ռաբելացիոց թագաւորն քազմութեամբ զօրացն գայր մտանէր 'ի քաղաքն. և տեսաւ ծեր մի զի ամբարեալ նիս՝ տնկէր, և ասէ. "Ո՛վ ծեր, զայդ ընդէր տնկես. զի 'ի քառասուն տարին ապա պտղաբերի, և դու այսօր և վաղիւն մեռանիս"։ Նա նա ասէ. "Թագաւոր, մին մարդ տնկեալ էր՝ ես վայելեցի. ես տնկեմ՝ գայ մին մարդ այլ վայելէ"։ Ասէ թագաւորն. "Տուք նմա հազար դահեկան, զի բարի խերանդէշ[2] մարդ մի է"։ և նորա առեալ գոհացաւ զԱստուծոյ։ Ասէ թագաւորն. "Ինդէր գոհանաս"։ ասէ. "Գոհանամ՝ որ ամէն մարդ 'ի քառասուն տարին վայելէ, ես այսօր վայելեցի"։ Ասէ. "Դարձեալ տուք նմա հազար դահեկան"։ դարձեալ գոհացաւ։ Ասէ թագաւորն, "Դարձեալ ընդէր գոհացեր"։ Ասէ. "Գոհանամ Աստուծոյ որ ամէն տունկ 'ի տարին մին հետ տայ պտուղ, իմ ծառ այսօր երկու անգամ ետ պտուղ"։ և հաճոյ թուեցաւ թագաւորին։

ՈՍԿԻՓՈՐԻԿ

Ժամանակին յարմարել։

Պարտ է աւագ աչք շուրջ հայել
և ժամանակին ծառայել։

ՄԱԳԻՍՏ.

Յաճտնի է ամենուն՝ կենաց քաղցրութիւնը, ժամանակին գինը, և անոր լաւ անցնելուն պտուղը, թէպէտև աս ճանչցուած ճշմարտութիւններս 'ի գործ դնողները խիստ քիչ են. չենք ուզեր աս ծանօթ բաներուն վրայ նոր ծանուցումն ընել, հապա ժամանակին և և մեր մէջ մէկ զարմանալի վերաբերութիւն մը կայ որ անոր վրայ կ'ուզենք

1 Արմաւենի. խուրմա աղաջը։
2 Խայրենդիշ. բարեմիտ, բարեսիրտ։